Հավելված
ՀՀ կառավարության 2017 թ.
դեկտեմբերի 28 -ի նիստի N 54
արձանագրային որոշման

Ո Ւ Ղ Ղ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն Ն Ե Ր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԵՎ ԲՆԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՐՏԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԱՇՎԻ ԵԼՔԵՐԻ (ԾԱԽՍԵՐԻ)

1. «Միջազգային էներգետիկ կորպորացիա» և «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերությունները Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի օգոստոսի 17-ի №1018-Ն որոշմամբ հաստատված կարգի համաձայն հաշվարկվող լրացուցիչ շահույթի գումարները մինչև 2018 թվականի հունվարի 31-ը փոխանցում են Հայաստանի Հանրապետության էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության արտաբյուջետային հաշվին:

2. Հայաստանի Հանրապետության էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության արտաբյուջետային հաշվից բյուջետային ելքերը (ծախսերը) կատարվում են միայն Հայաստանի Հանրապետության կառավարության որոշումների համաձայն:

3. Հայաստանի Հանրապետության էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարը մինչև 2018 թվականի դեկտեմբերի 30-ը Հայաստանի Հանրապետության կառավարության հաստատմանն է ներկայացնում Հայաստանի Հանրապետության էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության արտաբյուջետային հաշվի ելքերի (ծախսերի) ուղղությունները և նախահաշիվները: